

PROF. ROGER W. SMITH TO PRESIDENT SERZH SARGSYAN (ENGLISH & ARMENIAN TEXTS)

Posted on October 1, 2009 by Keghart



Category: [Opinions](#)



✘ **ZORYAN INSTITUTE OF CANADA, INC.**

255 Duncan Mill Rd., Suite 310
Toronto, ON, Canada M3B 3H9
Tel: 416-250-9807 Fax: 416-512-1736 E-mail: zoryan@zoryaninstitute.org
www.zoryaninstitute.org

September 30, 2009
President Serge Sargsyan
Republic of Armenia
26 Marshal Baghramian Avenue
Yerevan
Republic of Armenia, 0077
E-mail: hasmik@president.am, press@president.am

✘ **ZORYAN INSTITUTE OF CANADA, INC.**

255 Duncan Mill Rd., Suite 310
Toronto, ON, Canada M3B 3H9
Tel: 416-250-9807 Fax: 416-512-1736 E-mail: zoryan@zoryaninstitute.org
www.zoryaninstitute.org

September 30, 2009
President Serge Sargsyan
Republic of Armenia
26 Marshal Baghramian Avenue
Yerevan
Republic of Armenia, 0077
E-mail: hasmik@president.am, press@president.am

Dear President Sargsyan:

The Protocols for establishing diplomatic relations between Armenia and Turkey, although intended to help normalize relations between the two countries, raise serious questions about the process, and contain pitfalls, which I have set out below for your kind consideration.

My interest in the Protocols arises from being a scholar of genocide studies for most of my career, a founder of the International Association of Genocide Scholars, Chairman of the Academic Board of Directors of the

Zoryan Institute, and a recipient of the Movses Khorenatsi Medal last year, awarded by you, Mr. President, for my “considerable contribution to the international recognition of the Armenian Genocide.”

I and other scholars, who have no personal, ethnic or political motive for affirming the Armenian Genocide, feel we must point out one significant aspect of the Protocols, the clauses that call for

a dialogue on the historical dimension with the aim to restore mutual confidence between the two nations, including an impartial scientific examination of the historical records and archives to define existing problems and formulate recommendations

and

the establishment of an intergovernmental bilateral commission which shall comprise subcommissions for the prompt implementation of the commitments mentioned in operations paragraph 2 above in this Protocol.

Does “the historical dimension” article refer to the Armenian Genocide, and does the “intergovernmental bilateral commission” article refer to a historical commission? If not, then how can Armenia hope to have normal relations with Turkey while ignoring a major cause of the tension between the two countries? If so, then they are a source of grave concern, because there is a broad scholarly consensus that genocide unquestionably occurred in the case of the Armenians. You are well aware, Mr. President, that numerous distinguished historians, political scientists, sociologists, legal scholars, and authoritative institutions around the world have investigated the Genocide many times over, issued academic publications, and even made public declarations. These scholars have devoted their professional lives to conducting scientific research with the highest levels of academic integrity. As a result of their work, scholars have identified the Armenian Genocide as the archetypal case of modern genocide, whose pattern has many similarities with subsequent cases. Therefore, any commission that purports now to conduct “an impartial scientific examination of the historical records and archives” in effect dismisses all of the extensive research that has already been conducted for decades and implies that none of it was impartial or scientific. This is offensive to all genocide scholars, but particularly non-Armenian scholars, who feel their work is now being truly politicized.

I am sure you can appreciate that they have no confidence that a politically organized commission would not compromise historical truth, especially considering the imbalanced power relations between Armenia and Turkey. This assessment is particularly exacerbated when one considers the following:

1. The national archives of France, Great Britain, and the United States, as well as Turkey and its wartime allies Germany and Austria, to name only a few, are full of incontestable documentation of the genocidal intent and nature of the annihilation of the Armenians.

2. The historical records of the official investigation by a Turkish military Tribunal in post-war Turkey, recently published, based on authenticated, official Turkish documents, found irrefutable evidence of centrally organized mass murder against the bulk of the Ottoman Empire's own Armenian citizens. The prosecutors were Turks, the judges were Turks, and most of the witnesses were Turks, including high ranking military officers.

3. The International Center for Transitional Justice (ICTJ), reviewing the Armenian case for the Turkish-Armenian Reconciliation Commission (TARC), concluded that "the Events, viewed collectively, can thus be said to include all of the elements of the crime of genocide as defined in the Convention, and legal scholars as well as historians, politicians, journalists and other people would be justified in continuing to so describe them."

4. Prime Minister Erdogan has stated repeatedly that Turkey would never accept there was an Armenian Genocide, and even if a historical commission found that the Armenian case is genocide, it is argued, Turkey would just ignore the decision, as it did the report of the ICTJ, which led to the resignation of all the Turkish members of TARC.

But most importantly, Mr. President, the scholars are concerned that a historical commission would embolden those who would consider perpetrating genocide in future years by showing how easily genocide can be relativized, especially by the powerful.

In 2001, the Zoryan Institute issued a rare public commentary about Turkish-Armenian relations, in which it stated

Normally, dialogue is the first step towards the possible resolution of any conflict, and therefore reconciliation. The participants in a dialogue generally need to define the key issues which divide the parties and establish a process by which the dialogue will be conducted. There must be a sincere desire for mutual understanding and willingness to accept the factual issues in contention, even if emotionally highly charged...

Turkey does not have the capacity to enter into a process of dialogue to define the key issue of the Genocide. Even if genocide were to be affirmed by "an impartial scientific examination of the historical records and archives," Turkey would not be able to accept this, as it is currently bound by a strict penal code that makes it illegal for anyone from Turkey to even mention the Armenian Genocide. Therefore, was the negotiation of the protocols, so long in the making, done all this time in bad faith?

If not, then perhaps what is required is a modification of the wording in the Protocol referring to the "historical dimension," or a modification of the Turkish penal code, which currently criminalizes

discussion of this subject, to make the Protocols viable.

If such modifications are not possible due to diplomatic pressures at this time, then perhaps it would be prudent to stage the process so that discussion of the "historical dimension" is deferred. This would allow the people of both countries, but especially Turkey, the opportunity to demonstrate "a sincere desire for mutual understanding and willingness to accept the factual issues in contention, even if emotionally highly charged." In the meantime, Turkey and Armenia could proceed with the establishment of a diplomatic exchange, which, in itself, would be a major step towards reconciliation.

Yours respectfully,

Roger W. Smith, Chair, Academic Board of Directors

Armenian Translation of the letter

Սեպտեմբեր 30, 2009

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին

Հայաստանի Հանրապետություն

Մարշալ Բաղրամյան 26, Երևան, 0077

Էլ. փոստ: hasmik@president.am, press@president.am

Հարգելի պարոն Սարգսյան,

Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին

արձանագրությունները (պրոտոկոլները), միտված լինելով երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորմանը, առաջացնում են լուրջ հարցեր գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև պարունակում են բարդություններ, որոնք կցանկանայի ներկայացնել Ձեր ուշադրությանը ստորև շարադրանքում:

Հետաքրքրությունս հայ-թուրքական արձանագրությունների շուրջ պայմանավորված է ողջ գիտական կարիերայիս ընթացքում ցեղասպանության ուսումնասիրություններով զբաղված լինելու, Ցեղասպանության ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության հիմնադիրը լինելու, Չորյան ինստիտուտի Ակադեմիական խորհրդի նախագահը լինելու, ինչպես նաև Ձեր կողմից՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում ունեցած նշանակալի ավանդի համար» Մովսես Խորենացու անվան մեդալով պարգևատրված լինելու հանգամանքներով:

Ես և մի շարք այլ գիտնականներ, ովքեր որևէ անձնական, էթնիկական կամ քաղաքական պատճառներով չէ, որ հաստատում ենք հայոց ցեղասպանության փաստը, կարծում ենք, որ պետք է մատնանշենք արձանագրությունների մի կարևորագույն կողմը: Մասնավորապես խոսքն այն հոդվածների մասին է, ըստ որոնց

Կողմերը համաձայնում են՝

իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի եւ արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձեւակերպման համար,

և

ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը կունենա առանձին ենթահանձնաժողովներ՝ սույն Արձանագրության վերը նշված երկրորդ գործառույթային պարբերության հանձնառությունների անմիջական իրագործման նպատակով:

Վերաբերում է արդյոք “պատմական հարթության” մասին հողվածը հայոց ցեղասպանությանը, և վերաբերում է արդյոք “միջկառավարական երկկողմ հանձնաժողովի” հողվածը պատմական հանձնաժողովին: Եթե ոչ, ապա ինչպե՞ս կարող է Հայաստանը Թուրքիայի հետ փոխհարաբերությունների կարգավորման հույս ունենալ, երբ անտեսված է երկու երկրների միջև առկա լարվածության կարևորագույն պատճառը: Իսկ եթե այո, ապա դրանք դառնում են հույժ կարևոր մտահոգության առարկա, քանի որ գիտական լայն շրջանակներում կա այն համաձայնությունը, որ հայերի դեպքում ցեղասպանությունն անկասկած տեղի է ունեցել:

Պարոն Նախագահ, Դուք քաջատեղյակ եք, որ աշխարհում բազմաթիվ առաջադեմ պատմաբաններ, քաղաքագետներ, սոցիոլոգներ, իրավագետներ, ինչպես նաև մի շարք հեղինակավոր ինստիտուտներ բազմաթիվ անգամ ուսումնասիրել են Ցեղասպանությունը, հրատարակել մի շարք ակադեմիական հողվածներ ու գրքեր և նույնիսկ հանդես են եկել հանրային հայտարարություններով: Այս գիտնականներն իրենց մասնագիտական կյանքը նվիրել են ակադեմիական ազնվության բարձրագույն մակարդակով գիտական հետազոտություններ անցկացնելուն: Իրենց հետազոտությունների արդյունքում այս գիտնականները հայոց ցեղասպանությունը համարում են ժամանակակից ցեղասպանությունների արխետիպը, որի կազմակերպման և իրագործման մոդելը մի շարք նմանություններ ունի հետագա դեպքերի հետ: Այդ իսկ պատճառով, “պատմական փաստաթղթերի եւ արխիվների գիտական, անկողմնակալ” ուսումնասիրության նպատակով ստեղծվող ցանկացած հանձնաժողով արդյունքում անտեսում է այն ամբողջ լայնածավալ հետազոտությունները, որոնք իրականացվել են մի քանի տասնամյակների ընթացքում, և ավելին, ենթադրում, որ դրանցից որևէ մեկը անկողմնակալ և գիտական չէ: Սա վիրավորական է ցեղասպանությունն ուսումնասիրող բոլոր գիտնականների համար, և հատկապես նրանց, ովքեր ազգությամբ հայ չեն և ովքեր գտնում են, որ իրենց աշխատանքը աստիճանաբար քաղաքականացվում է:

Համոզված եմ, որ Դուք հասկանում եք, որ Նրանք ընդհանրապես վստահ չեն, որ այդ քաղաքականապես կազմակերպված հանձնաժողովը չի գնա գիշումների՝ ի վնաս պատմական ճշմարտությանը՝ հատկապես հաշվի առնելով Հայաստանի և Թուրքիայի միջև ուժային անհավասարակշիռ հարաբերությունները: Այս գնահատականն անհամեմատ խստանում է, երբ հաշվի ենք առնում մասնավորապես հետևյալը.

1. Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Թուրքիայի և իր պատերազմական դաշնակիցներ՝ Գերմանիայի և Ավստրալիայի ազգային արխիվները, (եթե անգամ սահմանափակվենք այսքանով) լեցուն են ցեղասպանությունն իրագործելու մտադրության և հայերի բնաջնջման գործընթացին վերաբերող անհերքելի փաստաթղթերով:

2. Հետպատերազմյան շրջանում Թուրքիայի ռազմական դատարանի կողմից իրագործված պաշտոնական հետաքննության վերջերս հրատարակված պատմական գրառումները, որ կատարվել են վավերացված, պաշտոնական թուրքական փաստաթղթերի հիման վրա, անվիճելիորեն վկայում են Օսմանյան կայսրության կենտրոնական կառավարության կողմից իրենց իսկ քաղաքացիներ հանդիսացող մեծաքանակ հայերի նկատմամբ իրագործված կազմակերպված զանգվածային ջարդերի մասին: Ընդ որում, այս դատական գործընթացում մեղադրողները թուրքեր էին, դատավորները թուրքեր էին, և վկաներից շատերը նույնպես թուրքեր էին՝ այդ թվում նաև բարձրաստիճան գինվորական պաշտոնյաներ:

3. Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (ԱԱՄԿ), վերանայելով հայոց ցեղասպանության հարցը Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (ԹՀՀՀ) համար, եզրակացրեց, որ “... այսպիսով, կարելի է ասել, որ այդ Իրադարձություններն, ամբողջությամբ վերցված, պարունակում են ցեղասպանության հանցագործության բոլոր տարրերն այնպես, ինչպես սահմանված է Կոնվենցիայում, և ինչպես իրավագետներն, այնպես էլ պատմաբանները, քաղաքագետները, լրագրողները և այլոք արդարացի կլինեն՝ շարունակելով այսպես մեկնաբանել դրանք”:

4. Վարչապետ Էրդողանը բազմիցս հայտարարել է, որ Թուրքիան երբեք չի ընդունի, որ հայոց ցեղասպանությունն տեղի է ունեցել, և եթե նույնիսկ պատմական հանձնաժողովը հաստատի, որ հայերի դեպքում ցեղասպանություն տեղի է ունեցել, կարելի է պնդել, որ Թուրքիան ուղղակի կանտեսի այս որոշումը, ինչպես վարվեց ԱԱՄԿ զեկույցի հետ, որը հանգեցրեց Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի բոլոր թուրք անդամների հրաժարականին: Սակայն կարևորագույնն այն է պարոն Նախագահ, որ ցեղասպանությունն ուսումնասիրող գիտնականները լրջորեն անհանգստացած են, որ պատմական հանձնաժողովը կքաջալերի Նրանց, որոնց մտքում ապագայում հնարավոր է հղանա ցեղասպանություն իրագործելու գաղափարը, ցույց տալով, թե հատկապես

ուժեղների կողմից ինչպես ցեղասպանությունը կարող է հեշտորեն
հարաբերականացվել:

2001թ.-ին Չորյան ինստիտուտը հրատարակեց հայ-թուրքական հարաբերությունների
մասին հազվադեպ հանդիպող հանրային մեկնաբանություն, որում ասվում է.

Սովորաբար երկխոսությունը ցանկացած հակամարտության հնարավոր լուծման, ուստի և
հաշտեցման առաջին քայլն է: Երկխոսության մասնակիցները պետք է սահմանեն այն առանցքային
հարցերը, որոնք բաժանում են կողմերին և հաստատեն մի գործըթաց, որի համաձայն
երկխոսողությունը պետք է անցկացվի: Այս գործում խիստ անհրաժեշտ է փոխըմբռնման անկեղծ
ցանկությունը և փաստացի վիճելի հարցերն ընդունելու պատրաստակամությունը՝ որքան էլ դրանք
զգացմունքայնորեն ծանր լինեն:

Թուրքիան բավականաչափ ներուժ չունի երկխոսություն սկսելու Ցեղասպանության
առանցքային հարցի քննարկման շուրջ: Նույնիսկ եթե ցեղասպանությունը
հաստատվելու լիներ “պատմական փաստաթղթերի եւ արխիվների գիտական,
անկողմնակալ ուսումնասիրության միջոցով”, Թուրքիան ի վիճակի չէր լինի ընդունել
այն, քանի որ այն այժմ շղթայված է իր խիստ քրեական իրավունքով, որն արգելում է
որևէ մեկին Թուրքիայում նույնիսկ հիշատակել հայոց ցեղասպանությունը: Այս
պատճառով չէ՞ք կարծում, որ արձանագրությունների շուրջ դեռևս շարունակվող
բանակցություններն այս ամբողջ ընթացքում տոգորված են չարամտությամբ:
Եթե ոչ, ապա այդ արձանագրությունները կենսունակ դարձնելու համար թերևս
կպահանջվի կա՛մ ձևափոխել արձանագրությունների շարադրանքի այն մասը, որ
վերաբերում է “պատմական հարթությանը”, և կա՛մ էլ ձևափոխել Թուրքիայի քրեական
իրավունքը, որն այժմ այս հարցի քննարկումը համարում է անօրինական:

Եթե այս փուլում նման ձևափոխություններ անհնար է իրականացնել
դիվանագիտական ճնշումների պատճառով, ապա թերևս ճիշտ կլինի գործընթացն
այնպես կազմակերպել, որ “պատմական հարթության” քննարկումը հետաձգվի: Սա
հնարավորություն կընձեռի երկու երկրների ժողովուրդներին՝ հատկապես Թուրքիայի,
դրսևորել “փոխըմբռնման անկեղծ ցանկություն և փաստացի վիճելի հարցերն
ընդունելու պատրաստակամություն՝ որքան էլ դրանք զգացմունքայնորեն ծանր լինեն”:
Մինչ այդ, Թուրքիան և Հայաստանը կարող են շարունակել դիվանագիտական
փոխանակման գործընթացը, ինչն ինքնին առանցքային քայլ կլինի հաշտեցման
ուղղությամբ:

Խորին հարգանքներով՝

Ռոջեր Սմիթ,

Տնօրենների ակադեմիական խորհրդի նախագահ

